



Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը

Համառոտ նախնականային զեկույց (հրապարակման համար մշակված տարբերակ)

Ապրիլ-հունիս, 2011թ.

Երրորդ նախնականային Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերականգնման գործընթացում աննշան կամ գրեթե ոչ մի փոփոխություն չի արձանագրվել: Դիրքերն էլ ավելի կոշտացան, իսկ փոխադարձ կշտամբանքները վերսկսվեցին ապրիլի 24-ի հիշատակի օրվա արարողությունների շուրջ: 2011 թվականի հունիսի խորհրդարանական ընտրություններում Ռեանպ թայիբ Էրդոհանի կուսակցության վերընտրվելու փաստը տեղիք տվեց Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերականգնման շուրջ վատատեսական վերաբերմունքի խորացմանը: Ըստ վերլուծաբանների կանխատեսումների՝ Էրդոհանի կառավարությունը կշարունակի կապել Թուրքիա-Հայաստան հարաբերությունների լրիվ նորմալացման հարցը Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հետ: Միաժամանակ, 2011 թվականի հունիսի 24-ին կազանում կայացած քննարկումներից հետո թուրքական կողմն էլ ավելի է շահարկում Հայաստանի հետ սահմանի բացման համար իր կողմից առաջադրվող նախապայմանը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումը:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերականգնման գործընթացի ներկայիս կարգավիճակն առաջադրել է մի շարք քաղաքական մարտահրավերներ և սահմանափակումներ: ԵՏՀ-ն և կոնստրցիուի անդամները նախաձեռնել են համակողմանի ինքնազնադատման միջնաժամկետ գործընթաց՝ ծրագրային մոտեցումը ստեղծված իրավիճակին հարմարեցնելու, ծրագրի հայեցակարգը և նպատակները վերանայելու, ինչպես նաև նոր հնարավորությունների կարիք ունեցող ոլորտները բացահայտելու նպատակով:

Երրորդ նախնականային ծրագրի յուրաքանչյուր ուղղության գծով նախատեսված մի շարք միջոցառումներում արձանագրվել է առաջընթաց: Ստորև ներկայացվում է միջոցառումների ոչ ամբողջական ցանկը: Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) Միությունը (ՀԱԳՄ) և Թուրք-հայկական բիզնեսի զարգացման խորհուրդը (TABDC) իրականացրեցին բիզնեսի ասպարեզում առաջնորդների հարցման հետազոտություն ինչպես Հայաստանում, այնպես էլ Թուրքիայում, որի արդյունքում մշակվեց «Գործարար ոլորտում կարծիք ձևավորող առաջնորդների հետազոտություն» զեկույցի նախնական տարբերակը: Ակնկալվում է, որ նրկու նրկրների գործարար շրջանակները, ինչպես նաև տեղական և միջազգային շահառուները կկարողանան հետազոտության արդյունքներն օգտագործել իրենց համագործակցության ռազմավարական պլանավորման համար:

Երևանի մամուլի ակումբի և Իզմիրի համալսարանի հետազոտական թիմերը մշակեցին լրատվամիջոցների կողմնակալության ուսումնասիրության արդյունքների մասին զեկույցի նախնական տարբերակը, որը լրատվամիջոցներում ներգրավված շահառուներին հնարավորություն կընձեռի ուսումնասիրել 2008-2010թթ. ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների փոխադարձ լուսաբանման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև կսեմացնի ապագայում առավել հավասարակշռված լուսաբանում ապահովելու հնարավորությունը: «Facebook» սոցիալական ցանցում բացված «4-րդ ալիք. Թուրքիա-Հայաստան» խորագրով էջը, շարունակում է «մեկ պատուհանի» սկզբունքով տեղեկատվություն տրամադրել «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրի, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի, ինչպես նաև թեմային առնչվող այլ նորությունների վերաբերյալ: Ավարտվել են նաև Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև երկխոսության խթանման չհետազոտված հնարավորությունների ուսումնասիրության մասին զեկույցի նախնական տարբերակի մշակման աշխատանքները: Այն հիմնվում է այն համոզմունքի վրա, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև երկխոսությունը կարող է նշանակալից ազդեցություն ունենալ միջազգային կապերի և երկու երկրների միջև հարաբերությունների վրա: ԵՀՀ-ն կազմակերպել է Հայաստան-Թուրքիա երկխոսությունում ընդգրկված հայաստանյան կազմակերպությունների հանդիպում, որի աշխատանքներին մասնակցեցին 20 կազմակերպությունների 50 ներկայացուցիչներ: Հանդիպման նպատակն էր ամրապնդել համագործակցությունը հայ-թուրքական երկխոսությունը խթանող տարբեր հայաստանյան կազմակերպությունների միջև: Հաջորդ եռամսյակում կուսումնասիրվեն թուրքական կազմակերպությունների համար նմանատիպ հանդիպում կազմակերպելու հնարավորությունները:

2011թ. մայիսին տեսագրվեց և Երկիր Մեդիա հեռուստաընկերության ցանցով հեռարձակվեց թուրք գործընկերների մասնակցությամբ երկրորդ հեռուստատեսային «թոք շոուն», որի միջոցով հայ հասարկայնությանը հնարավորություն ընձեռնվեց ստանալ անմիջականորեն թուրքական գործընկերների կողմից ներկայացվող տեղեկատվություն/մեկնաբանություն: 2011թ. մայիսին Երևանում կազմակերպվեց «Հայաստան-Թուրքիա. քաղաքականություն և մամուլ» քննարկումը, որը եզրափակվեց «Հայաստան-Թուրքիա» լրագրողական մրցանակը հայ հաղթողին հանձնելու արարողությամբ: ԵՀՀ-ի և «Անադոլու Բյուլթոյր» (Anadolu Kültür) կազմակերպության համատեղ ջանքերով նկարահանվեցին երկու վավերագրական ֆիլմեր՝ 2011թ-ին Հայաստանում և Թուրքիայում ապրիլի 24-ի հիշատակման միջոցառումների վերաբերյալ: Մինչ «Անադոլու Բյուլթոյր»-ը փորձում է ֆիլմերը ներկայացնել մի շարք միջազգային կինոփառատոններում (ներառյալ 2012թ. ապրիլին անցկացվելիք Ստամբուլի միջազգային կինոփառատոնում) ցուցադրվելու համար, առաջին անգամ թուրքական քաղաքացիական հասարակությունը բաց քննարկում է եղեռնի հիշատակումը թուրքական լրատվամիջոցներում: Հայ-թուրքական կինոպատճառի (ՀԹԿՊ) համատեղ ջանքերով ստեղծված հինգ այլ հայ-թուրքական վավերագրական ֆիլմերի առաջին միջազգային ցուցադրությունը կայացավ 2011 թվականի ապրիլին Ստամբուլի 31-րդ միջազգային կինոփառատոնի ընթացքում՝ տեղացի և միջազգային հանդիսատեսով լեփ-լեցուն դահլիճում: ՀԹԿՊ-ի ընտրությամբ՝ հայ-թուրքական համատեղ արտադրության մեկ այլ վավերագրական ֆիլմի նկարահանման նախաձեռնությունը ներկայացվեց «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրին՝ 30 000 ԱՄՆ դոլարի ֆինանսավորում ստանալու նպատակով: ԵՀՀ-ն ստացել է ավելի քան 20 հարցում ու առաջարկ Հայաստան-Թուրքիա «բաց դռներով» դրամաշնորհների ծրագրի շրջանակներում, որը կարևորում է երկկողմ հարաբերությունների խթանման գործում քաղաքացիական հասարակությունը, լրատվամիջոցները և գործարար համայնքը ներկայացնող հայ և թուրք շահառուների հնարավորությունների ընդլայնումը: «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրում ներգրավված հայ և թուրք գործընկեր

կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած Հայաստան-Թուրքիա «բաց դռներով» դրամաշնորհների ծրագրի մրցութային հանձնաժողովը հաստատել է ընդհանուր թվով հինգ ծրագիր՝ մոտավորապես 90 000 ԱՄՆ դոլարի ընդհանուր արժողությամբ: Հաստատված ծրագրերն աջակցում են թուրք մասնակիցների ներգրավմանը Երևանում կայանալիք մանկապատանեկան ֆիլմերի միջազգային կինոփառատոնում, հայաստանյան և թուրքական բիզնեսների համար տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնի ստեղծմանը, Գյումրի-Կարս տնտեսական համաժողովի կազմակերպմանը, Թուրքիայում բնակվող մահմեդական հայալեզու Համշենցիների շրջանում հետազոտության անցկացմանը, ինչպես նաև ավտոբուսով դեպի Թուրքիա ուղևորվող հայ միգրանտների մասին պատմող վավերագրական ֆիլմի նկարահանմանը:

«Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրի շրջանակներում քայլեր են ձեռնարկվում ինչպես ծրագրի տարբեր բաղադրիչների, այնպես էլ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը նպաստող ընթացիկ այլ նախաձեռնությունների միջև կապ ապահովելու ուղղությամբ: Իրադարձությունների շարքը, որը մեկտեղ բերեց մի շարք տարբեր մասնագետների՝ ներառյալ քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչների, էլ ավելի մեծ կարևորություն հաղորդեց Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հիմնախնդրին: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ նախատեսվեց, որ 2011թ. մայիսին Երևանում անցկացվող «Հայաստան-Թուրքիա. քաղաքականություն և մամուլ» քննարկումը համընկնի հայ և թուրք լրագրողների այցելության հետ, ովքեր այդ ժամանակ հանգրվանել էին Երևանում ավտոբուսով շրջագայելիս՝ որպես ԱՄՆ Պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող «Հայաստանի և Թուրքիայի միջև երկխոսության հաստատում» ծրագրի մի մաս: Արդյունքում ավելացավ միջոցառման այցելուների թիվը և այն լուսաբանող նյութերի ծավալն ինչպես հայաստանյան, այնպես էլ թուրքական մամուլում:

Հաջորդ եռամսյակում նախատեսված է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ ներառյալ մամուլի և քաղաքականության քննարկումներ Թուրքիայում, հաղթող ճանաչված թուրք լրագրողին լրագրողական մրցանակի հանձնման արարողություն, Երևանում կայանալիք «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնում ՀԹԿՊ-ի կողմից ներկայացվող ֆիլմերի առաջին ցուցադրություն, հայ և թուրք կինոարտադրողների համար սեմինար-դասընթացի կազմակերպում և այլն: «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագիրը կշարունակի կիրառել ճկուն մոտեցում՝ իր գործունեությունը քաղաքական իրավիճակին համապատասխանեցնելու, ինչպես նաև հայ և թուրք ժողովուրդների միջև երկխոսության խթանման ավելի լայն հնարավորություններ օգտագործելու նպատակով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և կոնսորցիումի անդամներն աջակցում են հայ-թուրքական մերձեցման գործընթացին՝ նպաստելով քաղաքացիական հասարակության խմբերի միջև կապերի ստեղծմանը, բիզնեսի ասպարեզում գործընկերության ձևավորմանը, տարածաշրջանային մասնագիտական ցանցերի հաստատմանն ու զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջանում մարդկանց միջև ավելի լավ փոխըմբռնման կայացմանը՝ հանուն խաղաղության և տնտեսական ինտեգրման:

Սույն զեկույցի բովանդակության համար միակ պատասխանատուն կոնսորցիումն է, իսկ այստեղ պարունակվող հայազբներն անպայմանորեն չեն արտացոլում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության հայազբները: